ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-029[2]-17.09.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճարի (այսուհետ՝ կարգավորման պարտադիր վճար) հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Կարգավորման պարտադիր վճարի հասկացությունը

1. Կարգավորման պարտադիր վճարը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)՝ օրենքներով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 3. Կարգավորման պարտադիր վճար վճարողները

1. Կարգավորման պարտադիր վճար վճարողներ (այսուհետ՝ վճարողներ) են համարվում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, բացառությամբ՝

1) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց, որոնց արտադրող կայանների դրվածքային հզորությունը միևնույն լիցենզիայի շրջանակում չի գերազանցում 10 ՄՎտ-ը.

2) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց, որոնք գտնվում են կառուցման ժամանակահատվածում.

3) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների, որոնց անհրաժեշտ չէ տիրապետել և շահագործել էլեկտրոնային հաղորդակցության ցանց.

4) էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ունեցող անձանց, որոնք չեն հանդիսանում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողներ.

5) հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն (բացառությամբ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական համակարգի շուկայի օպերատորի և գազամատակարարման համակարգի լիցենզավորված գործունեությունների) իրականացնող և ծառայություն մատուցող այն անձանց, որոնց հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա կարգավորվող գործունեությունից հասույթը չի գերազանցում 500 միլիոն դրամը (առանց ավելացված արժեքի հարկի):

2. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում մեկից ավելի լիցենզիա (թույլտվություն) ունեցող կարգավորվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված բացառությունները դիտարկվում են յուրաքանչյուր լիցենզիայի (թույլտվության) համար առանձին:

Հոդված 4. Վճարողների իրավունքները

1.Վճարողներն իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով և օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու հարկային մարմնի պաշտոնատար անձանց և հանձնաժողովի որոշումները, գործողությունները կամ անգործությունը.

2) կարգավորման պարտադիր վճարի վճարման մասին հարկային մարմնից ստանալու տեղեկանք.

3) պահանջելու սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարի գումարից ավելի վճարված գումարները մուտքագրելու միասնական հաշվին:

Հոդված 5. Վճարողների պարտականությունները

1. Վճարողները պարտավոր են՝

1) ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարը.

2) սույն օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել հաշվարկված տույժերի գումարները:

Հոդված 6. Կարգավորման պարտադիր վճարի վճարման պարտավորության դադարումը

1. Վճարողների կարգավորման պարտադիր վճարի վճարման պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, օրենքով կարգավորման պարտադիր վճարի վճարումից ազատումով, լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով: Հանրային ծառայության կարգավորվող ոլորտում գործունեության կասեցումը վճարողին չի ազատում կարգավորման պարտադիր վճար վճարելու պարտավորությունից:

2. Վճարողի ամբողջ գույքի ձեռքբերման արդյունքում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեության լիցենզիա կամ թույլտվություն ստացած անձը (նոր վճարող) համապատասխան լիցենզիան կամ թույլտվությունն ուժի մեջ մտնելու ամսվանից սկսած տվյալ տարվա մնացած ամիսների համար շարունակում է վճարել նախորդ վճարողի համար սահմանված կարգավորման պարտադիր վճարը: Գույքը մեկից ավելի վճարողների

կողմից ձեռք բերելու դեպքում սույն մասով նախատեսված կարգավորման պարտադիր վճարը նոր վճարողների միջև բաշխվում է ձեռքբերվող գույքի արժեքի համամասնությամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված նոր վճարողի՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեության լիցենզիան կամ թույլտվությունն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող երկու տարիների համար կարգավորման պարտադիր վճարի հաշվարկում սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա իրացման շրջանառության փոխարեն հաշվի է առնվում հաշվետու տարվա կանխատեսվող իրացման շրջանառությունը:

Հոդված 7. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Կարգավորման պարտադիր վճարը ժամանակին վճարելու և սույն օրենքի մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում կրում են վճարողները և դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

3. Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում վճարողները վճարում են տույժ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հարկի վճարումը ուշացնելու համար սահմանված տույժի չափով:

4. Վճարողները պակաս վճարված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվարկված տույժերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

5. Կարգավորման պարտադիր վճարի պարտավորությունների կատարումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ապահովում է հարկային մարմինը:

ԳԼՈՒԽ 3

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 8. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման և հաստատման կարգը

1. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման համար հիմք է ընդունվում հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված պահպանման ծախսերի մեծությունը (ՀՊԾ), որը առանձնացվում է հանձնաժողովի ընթացիկ գործառույթների իրականացման ծախսերի (ԸԾ) և հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) ծրագրերի, միջոցառումների և (կամ) գործառույթների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված ծախսերի (այսուհետ՝ նպատակային ծախսեր՝ ՆԾ):

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ծախսերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով հանձնաժողովը հաշվարկում է՝

1) վճարողների ընդհանուր իրացման շրջանառությունը ($ԻՇ_ը$) և հանրային ծառայության յուրաքանչյուր կարգավորվող ոլորտի իրացման շրջանառությունը ($ԻՇ_{Ո1}$, $ԻՇ_{Ո2}$, $ԻՇ_{Ո3}$ ….. $ԻՇ_{Ոn}$)՝ հաշվի առնելով յուրաքանչյուր վճարողի ($Վ_1$, $Վ_2$, $Վ_3$….. $Վ_n$) հանրային ծառայության կարգավորվող ոլորտում գործունեության (յուրաքանչյուր լիցենզիայի (թույլտվության) համար առանձին) հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա (սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում հաշվետու տարվա կանխատեսվող) իրացման շրջանառությունը ($ԻՇ_1$, $ԻՇ_2$, $ԻՇ_3$…… $ԻՇ_n$)՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարների.

2) ընդհանուր իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշիռը ($ՏԿԸ_1$, $ՏԿԸ_2$, $ՏԿԸ_3$….. $ՏԿԸ_n$).

3) հանրային ծառայության տվյալ կարգավորվող ոլորտի իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշիռը ($ՏԿՈ_1$, $ՏԿՈ_2$, $ՏԿՈ_3$….. $ՏԿՈ_n$).

4) յուրաքանչյուր վճարողի կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը ($Դ_1$, $Դ_2$, $Դ_3$……$Դ_n$)՝ որպես ընդհանուր իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշռի ու հանձնաժողովի հաշվետու տարվա ԸԾ-ի արտադրյալի և հանրային ծառայության տվյալ կարգավորվող ոլորտի մեջ

յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշռի ու հանձնաժողովի հաշվետու տարվա նպատակային ծախսերի ըստ ուղղությունների առանձին մեծությունների գումարի (∑ՆԾ$_i$) արտադրյալի հանրագումար: Եթե ՆԾ-ն վերաբերում է հանրային ծառայությունների երկու և ավելի կարգավորվող ոլորտների, ապա ՆԾ մեծությունը բաշխվում է այդ ոլորտների միջև՝ վերջիններիս իրացման շրջանառությունների հանրագումարում դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշռին համապատասխան:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հաշվարկների սխեման ներկայացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի կողմից իրականացվող հաշվարկների նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին է ներկայացվում է յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովի պահպանման ծախսերի նախահաշվի հետ միասին, որն այնուհետև կարող է ճշգրտվել սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի կողմից հաշվետու տարվա վճարողների անվանական կազմը, կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը (այդ թվում՝ ըստ ամիսների) հաշվարկվում և համապատասխան որոշմամբ հաստատվում են մինչև հաշվետու տարվան նախորդող տարվա ավարտը:

6. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաշվետու տարվա ընթացքում կարող են փոփոխվել հանձնաժողովի տվյալ տարվա պահպանման ծախսերի մեծության (ՀՊԾ) փոփոխությամբ կամ հաշվետու տարվա վճարողների անվանական ցանկում ներառված և հանձնաժողովի պահպանման ծախսերի մեծության մեջ 0.5 տոկոսից ավելի տեսակարար կշիռ ունեցող որևէ վճարողի՝ օրենքով կարգավորման պարտադիր վճարի վճարումից ազատմամբ կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցման հիմքով կարգավորման պարտադիր վճարի վճարման պարտավորության դադարեցմամբ պայմանավորված:

7. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում հաշվառված վճարողների կազմի (այդ թվում՝ դրանց հարկ վճարողների հաշվառման համարների) և վճարողների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի (ինչպես

նաև վճարողների ամսական վճարների չափի) վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ կարգավորման պարտադիր վճարների մեծությունների փոփոխության դեպքում մինչև հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող հինգերորդ օրը ներկայացնում է հարկային մարմին:

ԳԼՈՒԽ 4

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 9. Կարգավորման պարտադիր վճարի վճարման կարգը և ժամկետները

1. Վճարողները սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված և հաստատված կարգավորման պարտադիր վճարի ամսական գումարները վճարում են մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը ներառյալ:

2. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում մեկից ավելի գործունեություն իրականացնող անձանց կողմից վճարման ենթակա կարգավորման պարտադիր վճարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում յուրաքանչյուր կարգավորվող գործունեության համար առանձին:

3. Կարգավորման պարտադիր վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:

Հոդված 10. Կարգավորման պարտադիր վճարների պարտավորությունների հաշվառումը

1. Կարգավորման պարտադիր վճարների պարտավորությունները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 11. Կարգավորման պարտադիր վճարը վերադարձնելու կարգը

1. Սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարի գումարից ավելի վճարված գումարները մուտքագրվում են միասնական հաշվին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքով սահմանված կարգով առաջին անգամ կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաշվարկվում և ըստ վճարողների անվանական կազմի հաստատվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից սկսվող հաշվետու տարվա համար:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» 2005 թվականի նոյեմբերի 11-ի №ՀՕ-225-Ն օրենքը:

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
«Հանրային ծառայությունների
կարգավորման
պարտադիր վճարների մասին»
օրենքի

ՍԽԵՄԱ

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման

Հաշվառման վերցված վճարողները	Վճարողի իրացման շրջանառությունը (առանց ավելացված արժեքի հարկի)	Տեսակարար կշիռը		Յուրաքանչյուր վճարողի կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը	այդ թվում՝ ըստ ամիսների				
		ԸԾ-ի մասով	ՆԾ-ի մասով		1	2	3	…	n
Հանրային ծառայության կարգավորվող ոլորտ 1	ԻՇ$_{Ո1}$								
Վ$_1$	ԻՇ$_1$	ՏԿԸ$_1$ = ԻՇ$_1$/ ԻՇ$_Ը$	ՏԿՈ$_1$ = ԻՇ$_1$/ԻՇ$_{Ո1}$	$Վ_1 = ՎՎՎ_1 * ՎՎ + ՎՎՎ_1 * \sum_{i=1}^{m} ՎՎ_i$					

Վ$_2$	ԻՇ$_2$	ՏԿԸ$_2$ = ԻՇ$_2$/ ԻՇԸ	ՏԿՈ$_2$ = ԻՇ$_2$/ԻՇ$_{Ո1}$	$Ֆ_2 = ՖՖՖ_2 * ՖՖ + ՖՖՖ_2 * \sum_{i=1}^{m} ՖՖ_i$					
Հանրային ծառայության կարգավորվող ոլորտ 2	ԻՇ$_{Ո2}$								
Վ$_3$	ԻՇ$_3$	ՏԿԸ$_3$ = ԻՇ$_3$/ ԻՇԸ	ՏԿՈ$_3$ = ԻՇ$_3$/ԻՇ$_{Ո2}$	$Ֆ_3 = ՖՖՖ_3 * ՖՖ + ՖՖՖ_3 * \sum_{i=1}^{m} ՖՖ_i$					
Վ$_4$	ԻՇ$_4$	ՏԿԸ$_4$ = ԻՇ$_4$/ ԻՇԸ	ՏԿՈ$_4$ = ԻՇ$_4$/ԻՇ$_{Ո2}$	$Ֆ_4 = ՖՖՖ_4 * ՖՖ + ՖՖՖ_4 * \sum_{i=1}^{m} ՖՖ_i$					
Հանրային ծառայության կարգավորվող ոլորտ n	ԻՇ$_{Ոn}$								
Վ$_5$	ԻՇ$_5$	ՏԿԸ$_5$ = ԻՇ$_5$/ ԻՇԸ	ՏԿՈ$_5$ = ԻՇ$_5$/ԻՇ$_{Ոn}$	$Ֆ_5 = ՖՖՖ_5 * ՖՖ + ՖՖՖ_5 * \sum_{i=1}^{m} ՖՖ_i$					
…	ԻՇ$_{...}$	ՏԿԸ$_{...}$ = ԻՇ$_{...}$/ ԻՇԸ	ՏԿՈ$_{...}$ = ԻՇ$_{...}$/ԻՇ$_{Ոn}$	$Ֆ_{...} = ՖՖՖ_{...} * ՖՖ + ՖՖՖ_{...} * \sum_{i=1}^{m} ՖՖ_i$					

$Վ_n$	$ԻՇ_n$	$ՏԿԸ_n = ԻՇ_n / ԻՇ_Ը$	$ՏԿՈ_n = ԻՇ_n / ԻՇ_{Ոn}$	$\text{[illegible]}_n = \text{[illegible]}_n * \text{[illegible]} + \text{[illegible]}_n * \sum_{i=1}^{m} \text{[illegible]}_i$					
Ընդհանուրը	**$ԻՇ_Ը$**			**ՀՊԾ**					

1. Նպատակային ծախսը դիտարկվում է ըստ ծախսային ուղղությունների՝ առանձնացված: Եթե համապատասխան ուղղության նպատակային ծախսը ($ՆԾ_i$) վերաբերում է հանրային ծառայության կարգավորվող՝

1) մեկ ոլորտի, ապա այն ամբողջությամբ վերագրվում է տվյալ ոլորտին,

2) երկու և ավելի ոլորտների, ապա այն բաշխվում է այդ ոլորտների միջև՝ վերջիններիս իրացման շրջանառությունների հանրագումարում դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշռին համապատասխան:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճարի (այսուհետ՝ կարգավորման պարտադիր վճար) հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Կարգավորման պարտադիր վճարի հասկացությունը

1. Կարգավորման պարտադիր վճարը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)՝ օրենքներով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

ԳԼՈՒԽ 2.

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 3. Կարգավորման պարտադիր վճար վճարողները

1. Կարգավորման պարտադիր վճար վճարողներ (այսուհետ՝ վճարողներ) են համարվում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային

ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, բացառությամբ՝

1) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց, որոնց արտադրող կայանների դրվածքային հզորությունը միևնույն լիցենզիայի շրջանակում չի գերազանցում 10 ՄՎտ-ը.

2) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց, որոնք գտնվում են կառուցման ժամանակահատվածում.

3) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների, որոնց անհրաժեշտ չէ տիրապետել և շահագործել էլեկտրոնային հաղորդակցության ցանց.

4) էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ունեցող անձանց, որոնք չեն հանդիսանում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողներ.

5) հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն (բացառությամբ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական համակարգի շուկայի օպերատորի և գազամատակարարման համակարգի լիցենզավորված գործունեությունների) իրականացնող և ծառայություն մատուցող այն անձանց, որոնց հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա կարգավորվող գործունեությունից հասույթը չի գերազանցում 500 միլիոն դրամը (առանց ավելացված արժեքի հարկի):

2. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում մեկից ավելի լիցենզիա (թույլտվություն) ունեցող կարգավորվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված բացառությունները դիտարկվում են յուրաքանչյուր լիցենզիայի (թույլտվության) համար առանձին:

Հոդված 4. Վճարողների իրավունքները

1.Վճարողներն իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով և օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու հարկային մարմնի պաշտոնատար անձանց և

հանձնաժողովի որոշումները, գործողությունները կամ անգործությունը~~, ինչպես նաև հանձնաժողովի գործողությունները~~.

2) կարգավորման պարտադիր վճարի վճարման մասին հարկային մարմնից ստանալու տեղեկանք.

3) պահանջելու սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարի գումարից ավելի վճարված գումարները մուտքագրելու միասնական հաշվին:

Հոդված 5. Վճարողների պարտականությունները

1. Վճարողները պարտավոր են՝

1) ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարը.

2) սույն օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել հաշվարկված տույժերի գումարները:

Հոդված 6. Կարգավորման պարտադիր վճարի վճարման պարտավորության դադարումը

1. Վճարողների կարգավորման պարտադիր վճարի վճարման պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, օրենքով կարգավորման պարտադիր վճարի վճարումից ազատումով, լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով: Հանրային ծառայության կարգավորվող ոլորտում գործունեության կասեցումը վճարողին չի ազատում կարգավորման պարտադիր վճար վճարելու պարտավորությունից:

2. Վճարողի ամբողջ գույքի ձեռքբերման արդյունքում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեության լիցենզիա կամ թույլտվություն ստացած անձը (նոր վճարող) համապատասխան լիցենզիան կամ թույլտվությունն ուժի մեջ մտնելու ամսվանից սկսած տվյալ տարվա մնացած ամիսների համար շարունակում է վճարել նախորդ վճարողի համար սահմանված կարգավորման պարտադիր վճարը: Գույքը մեկից ավելի վճարողների կողմից ձեռք բերելու դեպքում սույն մասով նախատեսված կարգավորման պարտադիր վճարը նոր վճարողների միջև բաշխվում է ձեռքբերվող գույքի արժեքի համամասնությամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված նոր վճարողի՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեության լիցենզիան կամ թույլտվությունն ուժի մեջ մտնելու

տարվան հաջորդող երկու տարիների համար կարգավորման պարտադիր վճարի հաշվարկում սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա իրացման շրջանառության փոխարեն հաշվի է առնվում հաշվետու տարվա կանխատեսվող իրացման շրջանառությունը:

Հոդված ~~12~~7. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Կարգավորման պարտադիր վճարը ժամանակին վճարելու և սույն օրենքի մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում կրում են վճարողները և դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

3. Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում վճարողները վճարում են տույժ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հարկի վճարումը ուշացնելու համար սահմանված տույժի չափով:

4. Վճարողները պակաս վճարված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվարկված տույժերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

5. Կարգավորման պարտադիր վճարի պարտավորությունների կատարումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ապահովում է հարկային մարմինը:

ԳԼՈՒԽ 3~~.~~

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված ~~7~~8. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման և հաստատման կարգը

1. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման համար հիմք է ընդունվում հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված պահպանման ծախսերի մեծությունը (ՀՊԾ), որը առանձնացվում է հանձնաժողովի ընթացիկ գործառույթների իրականացման ծախսերի (ԸԾ) և հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) ծրագրերի, միջոցառումների և (կամ) գործառույթների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված ծախսերի (այսուհետ՝ նպատակային ծախսեր՝ ՆԾ):

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ծախսերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով հանձնաժողովը հաշվարկում է՝

1) վճարողների ընդհանուր իրացման շրջանառությունը ($ԻՇ_ը$) և հանրային ծառայության յուրաքանչյուր կարգավորվող ոլորտի իրացման շրջանառությունը ($ԻՇ_{Ո1}$, $ԻՇ_{Ո2}$, $ԻՇ_{Ո3}$ ….. $ԻՇ_{Ոn}$)՝ հաշվի առնելով յուրաքանչյուր վճարողի ($Վ_1$, $Վ_2$, $Վ_3$….. $Վ_n$) հանրային ծառայության կարգավորվող ոլորտում գործունեության (յուրաքանչյուր լիցենզիայի (թույլտվության) համար առանձին) հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա (սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում հաշվետու տարվա կանխատեսվող) իրացման շրջանառությունը ($ԻՇ_1$, $ԻՇ_2$, $ԻՇ_3$…… $ԻՇ_n$)՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարների.

2) ընդհանուր իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշիռը ($ՏԿԸ_1$, $ՏԿԸ_2$, $ՏԿԸ_3$….. $ՏԿԸ_n$).

3) հանրային ծառայության տվյալ կարգավորվող ոլորտի իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշիռը ($ՏԿՈ_1$, $ՏԿՈ_2$, $ՏԿՈ_3$….. $ՏԿՈ_n$).

4) յուրաքանչյուր վճարողի կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը ($Դ_1$, $Դ_2$, $Դ_3$……$Դ_n$)՝ որպես ընդհանուր իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշռի ու հանձնաժողովի հաշվետու տարվա ~~ընթացիկ գործառույթների իրականացման ծախսերի մեծության (~~ԸԾ~~)-ի~~ արտադրյալի և հանրային ծառայության տվյալ կարգավորվող ոլորտի մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշռի ու հանձնաժողովի հաշվետու տարվա նպատակային ծախսերի ըստ ուղղությունների առանձին մեծությունների գումարի

($\sum ՆԾ_i$) արտադրյալի հանրագումար: Եթե ՆԾ-ն վերաբերում է հանրային ծառայությունների երկու և ավելի կարգավորվող ոլորտների, ապա ՆԾ մեծությունը բաշխվում է այդ ոլորտների միջև՝ վերջիններիս իրացման շրջանառությունների հանրագումարում դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշռին համապատասխան:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հաշվարկների սխեման ներկայացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի կողմից իրականացվող հաշվարկների նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին է ներկայացվում է յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովի պահպանման ծախսերի նախահաշվի հետ միասին, որն այնուհետև կարող է ճշգրտվել սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի կողմից հաշվետու տարվա վճարողների անվանական կազմը, կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը (այդ թվում՝ ըստ ամիսների) հաշվարկվում և համապատասխան որոշմամբ հաստատվում են մինչև հաշվետու տարվան նախորդող տարվա ավարտը:

6. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաշվետու տարվա ընթացքում կարող են փոփոխվել հանձնաժողովի տվյալ տարվա պահպանման ծախսերի մեծության (ՀՊԾ) փոփոխությամբ կամ հաշվետու տարվա վճարողների անվանական ցանկում ներառված և հանձնաժողովի պահպանման ծախսերի մեծության մեջ 0.5 տոկոսից ավելի տեսակարար կշիռ ունեցող որևէ վճարողի՝ օրենքով կարգավորման պարտադիր վճարի վճարումից ազատմամբ կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցման հիմքով կարգավորման պարտադիր վճարի վճարման պարտավորության դադարեցմամբ պայմանավորված:

7. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում հաշվառված վճարողների կազմի (այդ թվում՝ դրանց հարկ վճարողների հաշվառման համարների) և վճարողների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի (ինչպես նաև վճարողների ամսական վճարների չափի) վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա

ժամկետում, իսկ կարգավորման պարտադիր վճարների մեծությունների փոփոխության դեպքում մինչև հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող հինգերորդ օրը ներկայացնում է հարկային մարմին:

ԳԼՈՒԽ 4.

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 98. Կարգավորման պարտադիր վճարի վճարման կարգը և ժամկետները

1. Վճարողները սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված և հաստատված կարգավորման պարտադիր վճարի ամսական գումարները վճարում են մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը ներառյալ:

2. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում մեկից ավելի գործունեություն իրականացնող անձանց կողմից վճարման ենթակա կարգավորման պարտադիր վճարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում յուրաքանչյուր կարգավորվող գործունեության համար առանձին:

3. Կարգավորման պարտադիր վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:

Հոդված 910. Կարգավորման պարտադիր վճարների պարտավորությունների հաշվառումը

1. Կարգավորման պարտադիր վճարների պարտավորությունները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 101. Կարգավորման պարտադիր վճարը վերադարձնելու կարգը

1. Սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարի գումարից ավելի վճարված գումարները մուտքագրվում են միասնական հաշվին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

~~ԳԼՈՒԽ 5.~~

~~*ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ*~~

~~Հոդված 11. Տեղեկատվությունների տրամադրման կարգը~~

~~1. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում հաշվառված վճարողների կազմի (այդ թվում՝ դրանց հարկ վճարողների հաշվառման համարների) և վճարողների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի (ինչպես նաև վճարողների ամսական վճարների չափի) վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ կարգավորման պարտադիր վճարների մեծությունների փոփոխության դեպքում մինչև հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող հինգերորդ օրը ներկայացնում է հարկային մարմին։~~

~~ԳԼՈՒԽ 6.~~

~~ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ~~

~~Հոդված 12. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը~~

~~1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։~~

~~2. Կարգավորման պարտադիր վճարը ժամանակին վճարելու և սույն օրենքի մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում կրում են վճարողները և դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք։~~

~~3. Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում վճարողները վճարում են տույժ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված չափով։~~

~~4. Վճարողները պակաս վճարված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվարկված տույժերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով։~~

~~5. Կարգավորման պարտադիր վճարի պարտավորությունների կատարումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ապահովում է հարկային մարմինը:~~

ԳԼՈՒԽ 5~~7.~~

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1~~3~~2. Եզրափակիչ մաս և Ա~~ա~~նցումային դրույթներ

1. Սույն օրենքով սահմանված կարգով առաջին անգամ կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաշվարկվում և ըստ վճարողների անվանական կազմի հաստատվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից սկսվող հաշվետու տարվա համար:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ~~Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից~~ 2005 թվականի նոյեմբերի 11-ի~~ն ընդունված «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին»~~ №ՀՕ-225-Ն օրենքը:

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

-

~~**Հայաստանի Հանրապետության**~~

~~**Նախագահ**~~ ~~**Ա. Սարգսյան**~~

Հավելված
«Հանրային ծառայությունների
կարգավորման
պարտադիր վճարների մասին»
օրենքի

ՍԽԵՄԱ

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման

Հաշվառման վերցված վճարողները	Վճարողի իրացման շրջանառությունը (առանց ավելացված արժեքի հարկի)	Տեսակարար կշիռը		Յուրաքանչյուր վճարողի կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը	այդ թվում՝ ըստ ամիսների				
		ԸԾ-ի մասով	ՆԾ-ի մասով		1	2	3	…	n
Հանրային ծառայության կարգավորվող ոլորտ 1	ԻՇ$_{Ո1}$								
Վ$_1$	ԻՇ$_1$	ՏԿԸ$_1$ = ԻՇ$_1$/ ԻՇ$_Ը$	ՏԿՈ$_1$ = ԻՇ$_1$/ԻՇ$_{Ո1}$	$Վ_1 = ՎՎՎ_1 * ՎՎ + ՎՎՎ_1 * \sum_{i=1}^{m} ՎՎ_i$					

Վ$_2$	ԻՇ$_2$	ՏԿԸ$_2$ = ԻՇ$_2$/ ԻՇԸ	ՏԿՈ$_2$ = ԻՇ$_2$/ԻՇ$_{Ո1}$	$Ա_2 = ԱԱԱ_2 * ԱԱ + ԱԱԱ_2 * \sum_{i=1}^{m} ԱԱ_i$					
Հանրային ծառայության կարգավորվող ոլորտ 2	ԻՇ$_{Ո2}$								
Վ$_3$	ԻՇ$_3$	ՏԿԸ$_3$ = ԻՇ$_3$/ ԻՇԸ	ՏԿՈ$_3$ = ԻՇ$_3$/ԻՇ$_{Ո2}$	$Ա_3 = ԱԱԱ_3 * ԱԱ + ԱԱԱ_3 * \sum_{i=1}^{m} ԱԱ_i$					
Վ$_4$	ԻՇ$_4$	ՏԿԸ$_4$ = ԻՇ$_4$/ ԻՇԸ	ՏԿՈ$_4$ = ԻՇ$_4$/ԻՇ$_{Ո2}$	$Ա_4 = ԱԱԱ_4 * ԱԱ + ԱԱԱ_4 * \sum_{i=1}^{m} ԱԱ_i$					
Հանրային ծառայության կարգավորվող ոլորտ n	ԻՇ$_{Ոn}$								
Վ$_5$	ԻՇ$_5$	ՏԿԸ$_5$ = ԻՇ$_5$/ ԻՇԸ	ՏԿՈ$_5$ = ԻՇ$_5$/ԻՇ$_{Ոn}$	$Ա_5 = ԱԱԱ_5 * ԱԱ + ԱԱԱ_5 * \sum_{i=1}^{m} ԱԱ_i$					
…	ԻՇ$_{...}$	ՏԿԸ$_{...}$ = ԻՇ$_{...}$/ ԻՇԸ	ՏԿՈ$_{...}$ = ԻՇ$_{...}$/ԻՇ$_{Ոn}$	$Ա_{...} = ԱԱԱ_{...} * ԱԱ + ԱԱԱ_{...} * \sum_{i=1}^{m} ԱԱ_i$					

$Վ_n$	$ԻՇ_n$	$ՏԿԸ_n = ԻՇ_n / ԻՇ_Ը$	$ՏԿՈ_n = ԻՇ_n / ԻՇ_{Ոn}$	$\text{[illegible]}_n = \text{[illegible]}_n * \text{[illegible]} + \text{[illegible]}_n * \sum_{i=1}^{m} \text{[illegible]}_i$					
Ընդհանուրը	**$ԻՇ_Ը$**			**ՀՊԾ**					

1. Նպատակային ծախսը դիտարկվում է ըստ ծախսային ուղղությունների՝ առանձնացված: Եթե համապատասխան ուղղության նպատակային ծախսը ($ՆԾ_i$) վերաբերում է հանրային ծառայության կարգավորվող՝

1) մեկ ոլորտի, ապա այն ամբողջությամբ վերագրվում է տվյալ ոլորտին,

2) երկու և ավելի ոլորտների, ապա այն բաշխվում է այդ ոլորտների միջև՝ վերջիններիս իրացման շրջանառությունների հանրագումարում դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշռին համապատասխան:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԱԺ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-029[2] -17.09.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի գլուխներ**	Օրենքի գլուխների համարակալումից հետո դրված միջակետերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մաս**	Իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց է «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը, որի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համաձայն՝ «Վճարողներն իրավունք ունեն՝ 1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եւ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու հարկային մարմնի պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները կամ անգործությունը, ինչպես նաեւ հանձնաժողովի գործողությունները»: Տվյալ դրույթից բխում է, որ վճարողը կարող է բողոքարկել հարկային մարմնի որոշումները, գործողությունները եւ անգործությունը, իսկ հանձնաժողովի դեպքում՝ միայն գործողությունները: Մինչդեռ, հասկանալի չէ՝ ինչո՞վ է պայմանավորված վճարողների համար բողոքարկման հնարավորություն նախատեսելը միայն հանձնաժողովի գործողությունների համար, սակայն ոչ անգործության կամ որոշումների:		
3.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխներ**	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 3-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ գլուխները բաղկացած են մեկական հոդվածից, մինչդեռ հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում: Գլուխները կարող են միավորվել բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Անհրաժեշտության դեպքում բաժինները կարող են բաժանվել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ենթաբաժինների՝ միավորելով առանձին գլուխներ»:		
4.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ (փոփոխված 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ)**	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ընթացիկ գործառույթների իրականացման ծախսեր» հասկացությանը տրվել է «(ԸԾ)» կրճատ տարբերակը, մինչդեռ՝ «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում եւս կիրառվում է «ընթացիկ գործառույթների իրականացման ծախսեր» հասկացությունը եւ «(ԸԾ)» կրճատ տարբերակը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը», առաջարկում ենք «ընթացիկ գործառույթների իրականացման ծախսեր» հասկացության կրճատ տարբերակի առաջին սահմանումից հետո կիրառել միայն կրճատ տարբերակը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

5.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 7-րդ գլուխ և 13-րդ հոդված (փոփոխված 5-րդ գլուխ և 12-րդ հոդված)**	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 7-րդ գլուխը եւ 13-րդ հոդվածը վերնագրված են «Անցումային դրույթներ»: «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 7-րդ գլխի եւ 13-րդ հոդվածի վերնագրերը փոխարինել «Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ» բառերով՝ ապահովելով գլխի եւ հոդվածի վերնագրերի համապատասխանությունը բովանդակությանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված (փոփոխված 7-րդ հոդված)**	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի՝ օրենքը խախտելու համար պատասխանատվությանը վերաբերող 12-րդ հոդվածով նախատեսվում է հետեւյալ կարգավորում. «1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			( ) 3. Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում վճարողները վճարում են տույժ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված չափով: 4. Վճարողները պակաս վճարված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաեւ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվարկված տույժերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով: 5 Կարգավորման պարտադիր վճարի պարտականությունների կատարումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ապահովում է հարկային մարմինը:»: «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծից մեբերված կարգավորումների վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում բացակայում են վճարների վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում նախատեսվող տույժերի չափերը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին հղումները կատարվում են ոչ հստակ: Հիմք ընդունելով մեջբերված		

			կարգավորումները, Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները եւ եզրակացության սույն կետում կատարված դիտարկումները՝ առաջարկում ենք «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին կատարվող հղումները հստակեցնել, ինչը իրավունքի սուբյեկտներին հնարավորություն կտա համապատասխան հանգամանքներում կողմնորոշվելու, թե վճարների վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում:		
7.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մաս (փոփոխված 12-րդ հոդվածի 2-րդ մաս)**	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի անվանման կիրառումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	***ՀՀ կառավարություն***	**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի վերջնամաս**	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի նախագծի վերջում նշված «Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը համարվում են նորմատիվ իրավական ակտի վավերապայմաններ:		